ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ XV ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

ԾԱՏՈՒՐ ԱՂԱՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

1980 թ. օգոստոսի 10—17-ը Բուխարեստում տեղի ունեցավ պատմական գիտության XV միջազգային կոնգրեսը, որին մասնակցում էին աշխարհի 70 երկրների 2715 պատգամավորներ։

Հինգ տարին մեկ աշխարհի պատմաբանները հավաքվում են միջազգային գիտաժողովի, հանրագումարի բերելու գիտական հետազոտությունների արդյունքները, քննարկելու կարևորագույն պրոբլեմները և ծանոթանալու պատմագիտական մտքի տարբեր ուղղություններին ու հայացքներին։

Վերջին տասնամյակներում նման կոնգրեսները դարձել են ոչ միայն գիտական բանավեճի, այլ նաև երկու հակամարտ հայացքների՝ մարքսիզմ-լենինիզմի և բուրժուական գաղափարների բախումների ու սուր պայքարի ասպարեզ։ Մարքսիստ պատմաբանները, առաջնորդվելով միակ ճիշտ և գիտական սկզբունքներով՝ պատմության մատերիալիստական ըմբռնումով, բուրժուական պատմաբանների դեմ մղվող պայքարում պաշտպանում են մարքսիստական պատմագիտության նվաճումները։ Բուրժուական պատմագիտությունը կա՛մ միանգամայն անտեղյակ է սոցիալիստական իրականությանը, կամ էլ քաղաքական միտումներով ծուռ հայելու մեջ է ներկայացնում սովետական պատմական գիտությունը։ Նման պայմաններում պատմագիտական կոնգրեսները հնարավորություն են տալիս մարքսիստ պատմաբաններին՝ հանդես գալու գիտական ընդհանրացումներով և քննական վերլուծության ենթարկելու համաշխարհային պատմագիտության մեջ եղած ըմբռնումները։ Եթե մի կողմ թողնենք բուրժուական առանձին գիտնականների ոչ գիտական, հակակոմունիզմի դիրքերից ելնող հերյուրանքները, ապա աշխարհի տարբեր երկրների պատմաբանների հիմնական մասը մեծ հետաքրքրություն է հանդես բերում դեպի ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների պատմագիտությունը և ցանկանում է համագործակցել նրա ներկայացուցիչների հետ։

Կոնգրեսներում ցայտուն կերպով են ընդգծվում հասարակական զարգացման ժամանակակից պրոբլեմները և դրանց ուսումնասիրության կարևորությունը։ Քննարկվում են բազմաթիվ այնպիսի պրոբլեմներ, որոնք դուրս են գալիս նեղ աշխարհագրական և ժամանակագրական շրջանակներից. մեր դարաշրջանի բնորոշ գիծն այն է, որ աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցող երևույթներն ու պատմական դեպքերը գտնվում են սերտ կապակցության մեջ և ազդում են մեկը մյուսի վրա։

Բուրժուական պատմագիտությունը տեխնոկրատիզմի ազդեցության տակ համակված է պեսիմիզմով և կանգնած է կատարյալ ճգնաժամի առջև։ Նրա միակ հույսը կապիտալի անսասանությունն է։ Իր հայացքով ուղղված լինելով դեպի ետ՝ նա չի ընդունում հասարակական հեղաշրջումներն ու դեմոկրատական վերափոխումները։

Մարքսիստական պատմագիտությունը, հենվելով օբյեկտիվ փաստերից բխող գիտական իմացության վրա, հասարակական կյանքը դիտում է որպես անընդհատ վեր բարձրացող դիալեկտիկական պրոցես, որում նոր զարգացող երևույթներն առաջընթացի ուժ են ստանում և լայն հեռանկարներ բացում մարդկության ապագայի համար։ Անկումային տրամադրություն ապրող բուրժուական պատմագիտությանը հակառակ, մարքսիստ պատմաբանները, ելնելով սոցիալիզմի առավելություններից, մարդկային հասարակության զարգացման փայլուն հեռանկարներ են ընդգծում։ Լավատեսական այդօրինակ համոզմունքով են սոցիալիստական համակարգի պատմաբանները գիտական և գաղափարական պայքարի մեջ մտնում բուրժուական պատմաբանների հետ։

Բուխարեստի կոնգրեսում քննարկվող կարևոր թեմաներից էին. «Արևելյան Եվրոպան որպես քաղաքակրթությունների հանդիպման զոնա», «Պատմաբանի լեզուն», «Պատմությունն ըստ ժամանակագրական շրջանների», «Արևելքի և արևմուտքի փոխհարաբերությունները», «Խաղաղության պրոբլեմի ձևերը պատմության մեջ», «Պատմության դասավանդման տեղն ու դերը երիտասարդության ձևավորման գործում XX դարում», «Քաղաքակրթությունը և հասարակությունը», «Գաղափարներն ու հասարակությունը», «Ֆեդերատիվ և պլուրալիստական պետություններ», «Կինը և հասարակությունը» և այլն։

Կոնգրեսը ներածական խոսքով բացեց Ռումինիայի հասարակական և քաղաքական գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, կոնգրեսի կազմկոմիտեի նախագահ, ակադեմիկոս Մ. Գեորգիուն։ Ապա ընթերցվեց Ռումինիայի կոմկուսի գլխավոր քարտուղար, Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության պրեզիդենտ Ն. Չաուշեսկուի ուղերձը։

Ն. Չաուշեսկուն նշել էր, որ կոնգրեսը կարևոր երևույթ է միջազգային գիտական կյանքում, պատմագիտության զարգացման ասպարեզում, զգալի ներդրում ժողովուրդների մերձեցման, նրանց միջև վստահության ամրապնդման և միջազգային համագործակցության, փոխադարձ ըմբռնման, զինաթափման և ամբողջ աշխարհում խաղաղության գործի ապահովման գործում։ Ներկա միջազգային լարված պայմաններում պատմաբանների պարտքն ու պատասխանատվությունն է, ընդգծել էր Ն. Չաուշեսկուն, ուսումնասիրելով հասարակության պատմությունը, դարերի ընթացքում կուտակված փորձի հարուստ գանձարանից հատուկ դասեր քաղել և եզրակացություններ անել, դրանով իսկ հարստացնել ներկա ու ապագա պատմությունը, նպաստել ժողովուրդների քաղաքակրթության առաջընթացին՝ հանուն ամբողջ մարդկության խաղաղության և երջանկության։ Ուղերձում նշվում էր, որ պատմաբանները պետք է ամենայն վճռականությամբ հանդես գան Եվրոպայում խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու օգտին, քանի որ այնտեղ ներկա դարում տեղի են ունեցել երկու համաշխարհային ավերիչ պատերազմներ և այժմ կենտրոնացված է մեծ չափերի հասնող մահաբեր, այդ թվում և ատոմային զենք։ Նշելով, որ ռազմական մրցավազքի ծախսերը հասնում են ահավոր չափերի՝ 500 մլդ. դոլլարի, Ն. Չաուշեսկուն պատմաբաններին կոչ էր արել պատերազմին վճռականորեն ասել «ո՛չ», հանդես գալ բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու, մարդկանց ազատ և անկախ ապրելու իրավունքը պաշտպանելու օգտին։

Ռումինական ժողովուրդը մեծ աշխատանք էր ծավալել նշելու իր նախնիների՝ դակերի, հիմնադրած պետականության 2050 տարին։ Ուղերձում նշված էր, որ այդ առիթը հնարավորություն կտա առավել չափով խորանալու ռումին ժողովրդի անցյալի պատմության մեջ։ «Մեր նախնիները՝ դակերը, հռոմեացիների հետ մեկտեղ,—գրել էր Ն. Ջաուշեսկուն,— կյանք են տվել ռումինական ժողովրդին, ստեղծել են այստեղ հզոր պետություն և ահեղ մարտեր են մղել ինքնուրույն զարգացման համար։ Այդ ժամանակ էլ նրանք ակտիվորեն համագործակցել են հարևան ժողովուրդների հետ՝ հին աշխարհի ուրիշ մեծ քաղաքակրթությունների հետ առաջ ընթանալու համար»։

Պլենար նիստում լսվեց նաև Ռումինիայի պատմաբանների ազգային կոմիտեի նախագահ պրոֆ. Շ. Պասկուի զեկուցումը՝ «Ռումին ժողովրդի ծագումն ու զարգացումը» թեմայով։ Նա ցույց տվեց հնագիտական, ազգագրական, ինչպես նաև լեզվագիտական այն նյութերը, որոնք բնութագրում են ռումին ժողովրդին։ Ռումին ժողովրդի ծագման հարցում հատկապես կարևոր նշանակություն է տրվում լեզվաբանասիրական նյութերին, հին Հռոմի մշակույթի և քաղաքակրթության հետ ունեցած փոխազդեցություններին։ Ընդգծվում էր, որ Հռոմեական կայսրության կողմից Բալկանների գաղութացումը քաղաքակրթության ոչնչացում չէր, այլ խաչաձևում, ռոմանացում, որում կարևոր դեր է կատարել լատիներենը։ Գոյություն է ունեցել երկլեզու մշակույթ։ Սակայն զեկուցողն ֆեոդալականացնում էր հռոմեական ազդեցության դերը և քննական մոտեցում չէր ցուցաբերում դեպի Հռոմի գաղութային լուծը։

Կոնգրեսում կարևոր տեղ տրվեց առաջադրված պրոբլեմների քննարկմանը, մտքերի ազատ փոխանակությանն ու բանավեճերին։ Գիտական, քաղաքական և մեթոդաբանական տարբեր համոզմունք ունեցող պատմաբաններն արտահայտում էին իրենց տեսակետները, ցանկանում մեկը մյուսին համոզել և ցույց տալ իրենց տեսակետի ճշմարտացիությունը։

Պատմական գիտությունների միջազգային կոմիտեին կից գործում են մոտ 30 հանձնաժողովներ, կոմիտեներ ու խմբեր, որոնց թվում բյուզանդագիտության միջազգային ասոցիացիան, սլավոնագիտության միջազգային հանձնաժողովը, աշխարհագրության և պատմության պանամերիկյան ինստիտուտը, վերածնության դարաշրջանն ուսումնասիրող միջազգային ֆեդերացիան, դրամագիտության միջազգային հանձնաժողովը, տնտեսական պատմության միջազգային ասոցիացիան, իրավունքի և հիմնարկությունների պատմության միջազգային ասոցիացիան, սոցիալական շարժումների և սոցիալական կառուցվածքի միջազգային հանձնաժողովը, Հարավ-արևելյան Եվրոպան ուսումնասիրող միջազգային ասոցիացիան, ծովային պատմության միջազգային հանձնաժողովը, երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության միջազգային կոմիտեն, պետական և ներկայացուցչական հիմնարկների միջազգային հանձնաժողովը, համեմատական ռազմական պատմության միջազգային հանձնաժողովը և այլն։

Գործում էր նաև համալսարանների պատմության միջազգային հանձնաժողովը, որտեղ հիմնական զեկուցումով հանդես եկան ԱՄՆ-ի ներկայացուցիչ պրոֆ. Ա. Գաբրիելը և Լեհաստանից պրոֆ. Ա. Գեյշտորը, որոնք ներկայացրին այդ երկրների համալսարանների կարևոր հրատարակություններ-

ը, հատկապես ուսումնական ձեռնարկները և գոյություն ունեցած ուսուցման մեթոդները՝ սկսած միջին դարերից մինչև 1914 թ.։ Հետաքրքրություն առաջացրեց անհատական ուսուցման մեթոդը ԱՄՆ-ում, որի ժամանակ ուսանողն ինքն է առաջարկում իր նախասիրած թեման։ Դա նման է մեր բուհերում այժմ կիրառվող հատուկ սեմինարին։

XV դ. Լեհաստանի համալսարաններում ավանդվում էին հասարակական գիտություններ՝ իրավունք, աստվածաբանություն, աստղագիտություն, պատմություն և այլն։ Զեկուցողն ընդգծեց, որ լեհերն առաջինն են սկսել իրենց ժողովրդի պատմության համալսարանական կուրս կարդալ։ Հատկապես Կրակովի համալսարանը միջին դարերից կապված էր շատ կուլտուրական կենտրոնների հետ և կարևոր տեղ էր տալիս հումանիտար գիտություններին, արվեստներին և այլն։ Հետաքրքրություն առաջ բերեց Կրակովի համալսարանի պատմությունը, որտեղ հատուկ ուսումնասիրություն է կատարվել ուսանող երիտասարդության սոցիալական կառուցվածքի մասին։ Համալսարանի արխիվում պահպանվել են ուսանողների կողմից XIX—XX դդ. լրացված հարցաթերթիկները, որոնք տեղեկություններ են տալիս նրանց ոչ միայն սոցիալական, այլ նաև ազգային կազմի վերաբերյալ։ Մինչև 1914 թ. Կրակովի համալսարանում սովորող ուսանողների 16%-ը եղել են գյուղացիներ։

Վերջին տարիներին շատ երկրներում լայն աշխատանք է կատարվում համալսարանների լիակատար պատմությունը ստեղծելու ուղղությամբ։ Ուշադրություն է դարձվում մանավանդ համալսարանների խաղացած սոցիալ-քաղաքական դերի վրա։ Կոնգրեսում զեկուցումներ լսվեցին Կանադայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, ԳԴՀ-ի, ԳՖՀ-ի, Չեխոսլովակիայի և Մոսկվայի համալսարանների մասին։

XVI—XVII դդ. շատ քիչ փոփոխություններ են տեղի ունեցել գերմանական համալսարաններում։ Հիմնականում դասավանդվում էին ընդհանուր կարգի բնական գիտություններ։ XVIII դ. մտցվում են մասնագիտական առարկաներ, հանդես են գալիս ուսանողական խմբակներ, ձևավորվում են ֆակուլտետներ, իսկ 1908 թ. մտցվում են մաթեմատիկայից սեմինար պարապմունքներ։ Նշվեց, որ Գերմանիայի համալսարաններում, հատկապես 1871 թ. հետո, ուժեղ կերպով պրոպագանդվում էր կայսրության գաղափարն ու գերմանական շովինիստական ռասայական տեսությունը։ ԱՄՆ-ի համալսարանների պատմության մեջ հատկապես ընդգծվում էր այն հանգամանքը, որ 1861—1914 թթ. ընթացքում, քաղաքացիական կռիվներից հետո, հատուկ ուշադրություն էր դարձվում Եվրոպայի ուսումնասիրման պրոբլեմին։ Դրանում աչքի էր ընկնում Հարվարդի համալսարանը։

Համալսարաններում մեծ տեղ էր տրվում օտար լեզուների և տարբեր ռեգիոնների ուսումնասիրմանը, ինչպես նաև Ռուսաստանի պատմությանը։ Պրոֆ. Կրասնոբաևը զեկուցեց Մոսկվայի համալսարանի պատմությանը նվիրված եռհատոր աշխատության և ուրիշ հրատարակությունների մասին։

Նեգրերի բարձրագույն կրթության պատմության պրոբլեմը քննարկելիս նշվեց նրանց ծանր վիճակը, հատկապես Հարավային Աֆրիկայում։

Համալսարանների պատմության քննարկմանն ակտիվորեն մասնակցեցին սովետական գիտնականները։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանն իր ելույթում նշեց միջնադարյան հայկական և վրացական համալսարանների, հատկապես Գլաձորի և Գելաթի համալսարանների խաղացած դերի մա-

սին։ Իսկ պրոֆ. Ի. Պեդոսովը խոսեց Մոսկվայի պետական համալսարանի տարեգրությունը և նրա պատմությունն արտացոլող վերջին տարիների գրականության մասին։ Այդ հրատարակություններն ընդգրկում են համալսարանի հիմնադրման և նրա զարգացման կարևորագույն ակտերը, նրա կառուցվածքը, ծրագրերը և այլ նյութեր։ Կարևոր նշանակություն է տրվում ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում համալսարանի խաղացած դերին։ ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Յու. Կուկուշկինն ընդգծեց համալսարանական կրթության ինտերնացիոնալ բնույթը։ Նա փաստեր բերեց ռուս մեծ գիտնական Մ. Լոմոնոսովի խաղացած դերի մասին ոչ միայն ունիվերսալիզմի, այլ նաև տարբեր երկրների գիտնականների ինտերնացիոնալ կապերի ամրապնդման ասպարեզում։

Բուխարեստի համալսարանի թանգարանի վարիչ պրոֆ. Ստանիկը մի շարք փաստաթղթեր հրապարակեց Ռումինիայի և այլ երկրների համալսարանների պատմական կապերի մասին։ Ուշագրավ էր Պյոտր I-ի հրամանագիրը մի խումբ ուսանողների Բուխարեստի համալսարանում սովորելու գործուղման մասին։ Թանգարանում պահվում են դասախոսների կոնսպեկտները փիլիսոփայության, գեղագիտության, ֆիզիկայի և այլ առարկաների գծով։

Պրոֆ. Բ. Կաշկաևը պատմեց Դաղստանի համալսարանի մասին, որտեղ սովորում են 57 ազգերի ներկայացուցիչներ, որոնցից 32-ը՝ Դաղստանի ժողովուրդներից։

Քննարկելով համալսարանների պատմությունը, գիտնականներն անհրաժեշտ էին համարում ստեղծել համալսարանների լիակատար տարեգրություն՝ լուսաբանելու պատմության տարբեր բնագավառները, քանի որ համալսարանները կարևոր դեր են խաղացել ժողովուրդների կյանքում, նրանց հասարակական-քաղաքական մտքի զարգացման ասպարեզում։ Դրա համար հանձնարարվում էր. 1) հրատարակել համալսարանի պատմության աղբյուրագիտական նյութերը, 2) գրել համալսարանի պատմությունը, 3) հրատարակել առանձին դասախոսների գիտական ուսումնասիրությունները, 4) լուսաբանել համալսարանի դերը ժողովրդի գաղափարական կյանքում։ Սակայն նման աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է համապատասխան գիտական բազա ստեղծել, ունենալ հարուստ ու կարգավորված արխիվ և այն հարստացնել սիստեմավորված նյութերով։ Դրա համար անհրաժեշտ է կիրառել խնամքով կազմված հարցաթերթիկների սիստեմ, որում կլուսաբանվեն ուսանողների քանակը, սոցիալական և ազգային կազմը, համալսարանի կենսագրությունը, նրա զարգացման դինամիկան, համալսարանի սոցիոլոգիան, նրա կառուցվածքը և այլն։ Առանց նման հետևողական աշխատանքի չի կարելի կատարյալ պատմություն ստեղծել։

Կոնգրեսում քննարկվող խոշոր պրոբլեմներից էր «Արևելյան Եվրոպան որպես քաղաքակրթությունների հանդիպման զոնա» հարցը, որի հիմնական զեկուցողներն էին ռումին գիտնականներ Է. Կոնդուրակին և Ռ. Թեոդորեսկուն։ Կից զեկուցումներով հանդես եկան Ռումինիայի, Ֆինլանդիայի, Հունաստանի, Իսրայելի, Լեհաստանի, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի գիտնականները, ինչպես նաև փորձագետներ Հունաստանից, Հունգարիայից, Իտալիայից և Շվեյցարիայից։

Նման պրոբլեմի քննարկումը հիմնավորվում էր նրանով, որ հնագույն շրջանից սկսած Բալթիկայից մինչև Սև ծովի ափերն ընկած տարածքում բնակվող ժողովուրդները, շփվելով Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների հետ, բյուրեղացրել և նոր որակի են բարձրացրել այդ զոնայի կուլտուրան։ Հարցի նման դրվածքը մի քայլ առաջ էր 1965 թ. Վիեննայի XII կոնգրեսում «ակկուլտուրացիա» (կուլտուրաների փոխազդեցություն) պրոբլեմի քննարկման համեմատ։ Այն ժամանակ դա փաստորեն վերածվեց առաջավոր երկրների «կուլտուրտրեգերության» հետամնաց երկրների հանդեպ։ Այդ առիթով բուրժուական պատմաբաններն ամեն կերպ ձգտում էին գաղութատիրությունը ներկայացնել որպես լուսավորություն տարածելու միջոց։

Հարավ-արևելյան Եվրոպան մտել է Յունեսկոյի ծրագրի մեջ, որպես կուլտուրաների ուսումնասիրման զոնա։ Արևելյան Եվրոպայի քաղաքակրթությունն ունի իր զարգացման մոդելն ու յուրահատկությունները, որոնք հատկապես աչքի են զարնում իրենց առանձին կողմերով՝ հունական և հռոմեբյուզանդական կուլտուրայի հետ խաչաձևման պրոցեսում։ Միջին դարերում Արևելյան Եվրոպայի երկրների կուլտուրական կապերն ու փոխադարձ ազդեցությունները շարունակվում են։

XVII—XVIII դդ. համալսարանների զարգացմանը զուգընթաց ուժեղանում են շփումներն ու փոխազդեցությունները։

Հույն գիտնական Լ. Վրանուսիսը նշեց հելլենիզմի նշանակությունը մի շարք ժողովուրդների մշակութային կյանքում։ Սակայն XI դ. սկսած տարբեր արշավանքները և ապա Օսմանյան կայսրության բազմադարյան տիրապետությունը ծանր հետևանքներ թողեցին բալկանյան ժողովուրդների կյանքում, նրանց պարտադրելով տնտեսական և հարկային հատուկ սիստեմ, խոչընդոտելով կուլտուրական առաջընթացը։

Սկսած XIX դ., կապիտալիզմի և բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով, Արևելյան Եվրոպայում ազդեցիկ դեր էին կատարում արևմտյան կուլտուրան, և կենտրոնացված ազգային պետության ստեղծման համար ազգային-ազատագրական պայքարն օսմանյան լծի դեմ։

ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Զ. Ուդալցովան որպես կից զեկուցող նշեց, որ պետք է վերջ տրվի Արևելյան Եվրոպայի քաղաքակրթության թերագնահատմանը։ Սակայն անհրաժեշտ է, որ մշակույթի զարգացումը ցույց տրվի տնտեսական ու հասարակական զարգացմանը համընթաց։ Այդ տեսակետից հետաքրքիր է Կիևյան Ռուսիայի պատմությունը, որը լայն կապերի մեջ էր բալկանյան երկրների հետ։ Ռուսական պետության և ռուս ժողովրդի դերը հսկայական է XIII դ. թաթարա-մոնղոլական արշավանքներին դիմակայելու գործում։ Փաստորեն իր վրա վերցնելով օտար զավթիչների հարվածը, ռուսական պետությունը պատնեշ կանգնեց և փրկեց Եվրոպան այդ հորդաների ներխուժումից։ Դրանով Ռուսաստանը փրկեց Արևելյան Եվրոպայի՝ գուցե նաև ողջ Եվրոպայի քաղաքակրթությունը։ ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Վ. Պաշուտոն ևս ընդգծեց ռուսական կենտրոնացված պետության դերը Եվրոպայի քաղաքակրթությունը պաշտպանելու գործում։ Կուլիկովյան ճակատամարտի վայրում կատարված պեղումները նոր հավաստի նյութեր են տալիս այդ մասին։ Հելսինկիի համալսարանի պրոֆ. Խ. Կիրկինենը հատկապես կանգ առավ Արևելյան Եվրոպայի քաղաքակրթության մեջ Ուրալից ծագող ուգրոֆիննական ժողովուրդների ներդրած ավանդի վրա։ Նա նշեց նաև սկանդի-

նավյան երկրների հետ տնտեսական-առևտրական և կուլտուրական կապերի նշանակությունն Արևելյան Եվրոպայի համար։ Պրոֆ. Խ. Կիրկինենը կարևոր նշանակություն տվեց քրիստոնեության դերին՝ կուլտուրաների մերձեցման գործում։

Բուլղարացի պատմաբան Վ. Տիպկովա-Զաիմովան ընդգծեց, որ քաղաքակրթության մասին խոսելիս չպետք է անտեսել ժողովուրդների տեղաշարժերը Սև ծովի և Կովկասի շրջաններում, ինչպես նաև Թրակիայում։ Նա կանգ առավ Արևելյան Եվրոպայի ժողովուրդների տիպոլոգիայի և ապա բուլղար ժողովրդի ձևավորման ու նրա պետականության ստեղծման վրա։

Գիտական ճշմարտության հետ ոչ մի առնչություն չուներ Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր է. Թադենի ելույթը, որը, խեղաթյուրելով պատմական իրողությունները, իր հակագիտական էքսկուրսներով փորձում էր ժխտել այն վիթխարի նվաճումները, որոնք ձեռք են բերվել ՍՍՀՄ-ում՝ կուլտուրայի բնագավառում։

Պրոֆ. Տեոդորեսկուն իր եզրափակիչ խոսքում նշեց, որ Փոքր Ասիան մասնակցել է Արևելյան Եվրոպայի քաղաքակրթության ձևավորմանը, որը չի կարելի ասել հյուսիսի երկրների մասին։ Նա համաձայնելով այն փաստի հետ, որ Բյուզանդիան կարևոր դեր է խաղացել քաղաքակրթության տարածման գործում, միաժամանակ նշեց, որ տեղական ժողովուրդները ևս մասնակցել են դրա ձևավորմանը։

Կոնգրեսում հրապարակվեց մի փաստաթուղթ, որ գրվել է Կոստանդնուպոլիսը թուրքերի գրավելուց 18 տարի հետո։ Նրա հույն հեղինակը սուլթան Մահմեդ II-ին ներկայացնում է որպես մի տիրակալի, որի օրոք քաղաքակրթությունը խիստ անկում է ապրել։ Այդ երևի պատասխան էր բոլոր նրանց, ովքեր լռությամբ էին անցնում այն փաստի կողքով, որ օսմանյան բազմադարյան տիրապետությունը մեծ չարիք հանդիսացավ և մինչ այդ ստեղծված քաղաքակրթությունը կատարյալ ավերածության ենթարկեց։

Բուլղարական ժողովուրդն իր հարգանքի տուրքն է մատուցում Կիրիլ և Մեթոդի լուսավորիչներին, որոնք Հունաստանից քրիստոնեություն են տարածել բուլղարների մեջ։ Դա հենց ապացույց է այն բանի, որ հունական ազդեցությունը շատ ուժեղ է եղել բալկանյան ժողովուրդների և հատկապես բուլղարների մեջ։ Բուլղար պրոֆ. Դամյանովը շեշտեց, որ Արևելյան Եվրոպայի երկրները կապված են եղել և՛ հարավի, և՛ արևմուտքի հետ, սակայն բոլորից առավել Ռուսաստանի հետ՝ որպես սլավոնական երկրի։

Ակադեմիկոս Մ. Կիմը նշեց քաղաքակրթությունների զարգացման անհամաչափ ընթացքը, ընդհանուրի և մասնավորի հարաբերակցությունը, ինչպես նաև ազգային տիպերի դերը համամարդկային քաղաքակրթության ձևավորման գործում։

Կոնգրեսում քննարկվող պրոբլեմներից էր նաև «խաղաղության պրոբլեմի ձևերը պատմության մեջ» հարցը, որի հիմնական զեկուցողն իտալացի պատմաբան պրոֆ. Ռ. Մանսելլին էր։ Նախագահողը՝ շվեցարացի պատմաբան Ա. Դյուբուան, իր բացման խոսքում նշեց, որ ինքը փոքր երկրի ներկայացուցիչ է և արտահայտելով իր ժողովրդի իղձերը՝ գտնում է, որ խաղաղությունը պետք է պաշտպանել բոլոր միջոցներով։ Նախագահը հարցի քննարկումը բաժանեց երկու մասի. առաջինը՝ հին շրջանից մինչև 1500 թ. և երկ-

որդը՝ նոր ու նորագույն շրջան։ Իդեալականացնելով հռոմեական միապետության նվաճողական քաղաքականությունը, նա այն համարեց խաղաղության երաշխիք։ Ըստ նրա՝ խաղաղությունն օրենք էր Հռոմի տիրակալների համար։ Խաղաղությունը զենքի ուժով է հաստատվել, ասաց Ռ. Մանսելլին. կրոնը, կուլտուրան և գաղափարախոսությունը ևս խաղաղության ձևեր են։ Ըստ նրա՝ Մուհամեդը իսլամի տարածումով և Կարլոս Մեծը կենտրոնացված պետություն ստեղծելով՝ պայքարում էին խաղաղության համար։ Խաչակրաց արշավանքները, հանդես գալով քրիստոնեության պաշտպանության դերում, նույնպես պաշտպանում էին խաղաղությունը։ Հռոմի պապի և առանձին իշխանների միջև եղած հակասությունները և պայքարը նույնպես հեղինակը դիտում էր խաղաղության ձևեր։ Խաղաղության ձևեր համարվեցին նաև միջնադարյան քաղաքների առևտրական և այլ նպատակներով ստեղծված միությունները։ Խաղաղության իդեալական ձևը Ռ. Մանսելլին համարեց Հռոմեական կայսրությունը։ Նրա անկումից հետո, զեկուցողի կարծիքով, տեղի ունեցավ անցում «բազմամարդ քաղաքական իշխանության»։ Ի վերջո, բուրժուական գիտնականը եզրակացրեց, թե կարևորը «խաղաղության գաղափարն է»։ Զգալով իր զեկուցման հարցադրումների խառնաշփոթությունը, Ռ. Մանսելլին հայտարարեց, որ իր նպատակը բանավեճ առաջացնելն էր։ Սակայն պարզ էր, որ խաղաղության մասին այդ զեկուցումը ներկայացնում էր ժամանակակից բուրժուական գիտության իսկական պատկերը, գիտություն, որն ամբողջովին արտահայտում է իմպերիալիստների՝ ուժի դիրքերից իրենց կամքը թելադրելու ձգտումները։ Դրա համար նրանք այսօր պատմական «հիմքեր» են փնտրում թե՛ Հռոմեական կայսրության, թե՛ Կարլոս Մեծի ու Նապոլեոնի աշխարհակալական օրենքներում և գործերում։

Պրոֆ. Ռ. Մանսելլիի դրույթների քննադատությամբ հանդես եկավ ռումին պատմաբան պրոֆ. Պիպերուն, որը նշեց, թե հռոմեական օրենսդրությունն ընդունել որպես խաղաղության ձև անհիմն է։ Իսկ պրոֆ. Կոնստանիանուն նշեց, որ խաղաղության տիպոլոգիան, որպես իրականություն, կապված է սոցիալ-քաղաքական հարաբերությունների հետ։ Սոցիալիստական երկրների գիտնականների մի շարք ուրիշ ելույթներում ևս քննադատվեցին այդ զեկուցման իմպերիալիստական, հակախաղաղասիրական դրույթները։

Խոշոր հետազոտական թեմաներից էր «Ֆեդերատիվ և պլուրալիստական պետություններ» հարցը, որի մասին հիմնական զեկուցումով հանդես եկան լեհ պատմաբաններ Յու. Բարդախը և Խ. Իզդեմսկին։ Զեկուցողները ցույց տվին ֆեդերացիայի, որպես պետական սիստեմի և քաղաքական իշխանության ձևի, լայն ընդգրկումը, որը հաշվի է առնում տնտեսական, ազգային, էթնիկական և կուլտուրական առանձնահատկությունները, ինչպես նաև կրոնական ընդհանրությունը։ Նշվեցին նաև բազմաթիվ պատմական փաստեր, երբ ազգային ներհակությունները հանգեցրել են ֆեդերատիվ միության անկմանը։ Խոսելով բուրժուական ֆեդերացիայի մասին, զեկուցողներն այն կապում էին բուրժուական սահմանադրական կարգի հետ։ Զեկուցումն ընդհանուր առմամբ կրում էր օբյեկտիվիստական բնույթ, նրանում անտեսված էին սոցիալիստական և բուրժուական ֆեդերացիաների տնտեսական ու քաղաքական արմատական տարբերությունները, չէր ընդգծվում սովետական

Ֆեդերացիայում ինքնորոշված ժողովուրդների իսկական իրավահավասարությունը կյանքի բոլոր բնագավառներում։

Ավստրիացի պատմաբան Ա. Շոուն նշեց, որ բուրժուական երկրների ֆեդերացիայում միշտ էլ նկատելի է այն փաստը, որ ազգային զգացմունքները գերիշխող են դառնում և ֆեդերատիվ միության անկման պատճառ հանդիսանում։ Կանադացի գիտնական Զ. Արմստոնը փաստեր էր բերում Կանադայում 100 տարի առաջ տեղական ֆեդերատիվ իշխանությունների ձևավորման մասին, որոնք առավել ազդեցություն ունեին, քան կենտրոնական կառավարությունը։ ԳՖՀ-ի ներկայացուցիչ Գ. Մոմզենը նշեց, որ ֆեդերատիվ հասկացողությունը Գերմանիայի պատմության մեջ խաղացել է երկրորդական դեր։ Ավստրիայում ևս այն ձևական բնույթ էր կրում։ Գերմանիայում միշտ էլ իշխանությունը կենտրոնացել է բյուրոկրատիայի-Ռայխի ձեռքում։ Նրա կարծիքով՝ ֆեդերացիայի գաղափարը պատկանում է ապագային։ Շվեցարիայի ներկայացուցիչ Պ. Շտադլերը շվեցարական կանտոնները համարեց ֆեդերացիայի յուրահատուկ մոդել։

ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Յու. Պոլյակովը բացահայտեց սովետական ֆեդերացիայի ինտերնացիոնալիստական բնույթը, նրա տնտեսական ու քաղաքական նշանակությունը սոցիալիստական ազգերի զարգացման ու ծաղկման գործում։ Նա հատկապես ընդգծեց սահմանադրությամբ ապահովված բոլոր սովետական ազգերի ու ժողովուրդների սուվերեն իրավունքները։

ԱՄՆ-ի ներկայացուցիչ Գ. Շայբերը խոսեց Ամերիկայում գոյություն ունեցող ֆեդերացիաների տարբերությունների մասին։ Եթե ԱՄՆ-ում սահմանադրությունը թույլ է տալիս դուրս գալու կոնֆեդերացիայի կազմից, ապա Կանադայում դա օրենքից դուրս է նետված։ Բուրժուական երկրներում ֆեդերացիայի հասկացողությունը գործում է յուրովի։ Գ. Շայբերը կատարեց ԱՄՆ-ի ֆեդերալիզմի հետևյալ պարբերացումը. մինչև 1831 թ., ապա քաղաքացիական կռիվներից հետո ընկած շրջան, իսկ 1933 թ. հետո կատարված փոփոխությունները, ըստ այդ հեղինակի, հանգեցրին այսպես կոչված կոոպերատիվ ֆեդերալիզմի։ Սակայն հայտնի է, որ ԱՄՆ-ի ֆեդերալիզմն ամբողջովին հենվում է իմպերիալիզմի դիկտատի, ուժի դիրքերից գործելու սկզբունքի վրա։

Հարավսլավիայի ներկայացուցիչ Ե. Պլետերսկին նշեց, որ իրենց երկրում ֆեդերացիան հիմնված է ինքնորոշման իրավունքի վրա։ 1918 թ. պետականորեն կազմավորվելու հետ ստեղծվում է նաև ֆեդերատիվ ընդհանրություն, որը 1937 թ. որոշ փոփոխությունների է ենթարկվում։ Այժմ սոցիալիստական Հարավսլավիան սուվերեն իրավունքներով ժողովուրդների ֆեդերացիա է։ Վենեսուելայի ներկայացուցիչ Է. Իտուրրիետան նշեց, որ Լատինական Ամերիկայում դեռևս լրջորեն չեն ուսումնասիրվել ֆեդերալ հիմունքները։ Սակայն փաստն այն է, որ այնտեղ ֆեդերալիզմը որևէ նշանակություն չի ունեցել և նրա փոխարեն իշխող է եղել կենտրոնական իշխանությունը։

Ադրբեջանի ԳԱ ակադեմիկոս Ա. Սումբատ-զադեն, պրոֆ. Բ. Կաշկաևը և տողերիս հեղինակը խոսեցինք հատկապես նախկինում ճնշված ժողովուրդների կյանքում սովետական ֆեդերացիայի կարևոր նշանակության մասին։ Մենք մեր ելույթում նշեցինք հայ ժողովրդի կրած հալածանքներն առաջին

համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Արևմտյան Հայաստանի բնակչությունը գենոցիդի ենթարկվեց, իսկ Արևելյան Հայաստանը տնտեսապես ավերվեց և դարձավ տասնյակ հազարավոր գաղթականների, սովի ու համաճարակի երկիր։ Նշեցինք, որ դաշնակցականների չարաբաստիկ իշխանության ժամանակ ժողովրդի վիճակն ավելի վատթարացավ։ Ընդգծեցինք, որ սովետական կարգերի հաստատումը և 1922 թ. Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծումը փրկարար նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար, նա մեծ չափերի հասնող օգնություն ստացավ թե՛ Սովետական Ռուսաստանից, թե՛ Ադրբեջանից և մյուս եղբայրական հանրապետություններից։ Անդրֆեդերացիան խթանեց տնտեսական վերականգնումը, ամրապնդեց ժողովուրդների բարեկամությունը, պայմաններ ստեղծեց սոցիալիզմի հիմքերի կառուցման համար։

ԳՖՀ-ի ներկայացուցիչ Ասատչին և նրա ձայնափող հանդիսացող ԱՄՆ-ի ներկայացուցիչ Խրիստոն իրենց հակասովետական ելույթներում առաջ քաշեցին տարածքային հարցեր, փորձեցին աղավաղել ազգերի իրավահավասարության՝ սոցիալիստական ֆեդերացիայի սկզբունքները։ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Մանսոնն արտահայտվեց ֆեդերալիզմի դեմ և բերեց Հարավային Աֆրիկայի օրինակը։

Սովետական գիտնականներ Կուլիչենկոն, Իվանովը, Յու. Պոլյակովը, Գ. Ղարիբջանյանը և ուրիշներ բազմաթիվ կոնկրետ փաստերով մերկացրին Ասատչու, Խրիստոյի, Մանսոնի և այլոց կեղծարարություններն ու հակասովետական նկրտումները։

Ազգային-ազատագրական շարժումներին վերաբերվող հարցի քննարկմանը մասնակցեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Գալոյանը։ Նա իր ելույթում հատկապես ընդգծեց հայ գյուղացիական շարժումների դերը XIX դ. երկրորդ կեսին՝ նշելով դրանց սոցիալական և ազգային-ազատագրական բնույթը։ Ալբանիայի ներկայացուցիչը թեև ընդունեց, որ երկրորդ համաշխարհային պատերազմում ամենաճիշտ քաղաքականությունը վարում էր ՍՍՀՄ-ը, որը կարողացավ բոլոր ժողովուրդներին միավորել ընդհանուր թշնամու դեմ, սակայն չկարողացավ զերծ մնալ հակասովետական ոտնձգություններից։

Կոնգրեսի կարևոր թեմաներից էր նաև «Կինը և հասարակությունը» հարցը, որի մասին զեկուցումով հանդես եկավ ֆրանսիացի գիտնական Կ. Ֆոլենը։ Նա նշեց, որ իր զեկուցման համար կարողացել է նյութեր ստանալ 6 երկրներից, այդ թվում նաև ՍՍՀՄ-ից։ Կոնգրեսում քննարկվում էր կնոջ վիճակը հասարակության մեջ՝ սկսած հին ժամանակից մինչև մեր օրերը։ Տարբեր երկրների ներկայացուցիչները նյութեր էին հրապարակում կնոջ վիճակի և հասարակական-քաղաքական դիրքի մասին։ Հրապարակված փաստերն ակնառու ցույց էին տալիս, որ կինը ոչ մի երկրում այնպիսի լայն իրավունքներ ու ազատություն չի վայելում, ինչպես ՍՍՀՄ-ում։

Օգոստոսի 17-ին կայացավ կոնգրեսի եզրափակիչ նիստը, որտեղ հանրագումարի բերվեցին նրա աշխատանքները, կոնգրես, որին առաջին անգամ մասնակցում էին Չինաստանի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի պատվիրակությունները։ Կոնգրեսի հրատարակած հատուկ թերթում արտացոլվել էր նրա ամենօրյա աշխատանքը։ Հետաքրքիր էր նաև աշխար-

հի բոլոր երկրներից ստացված պատմական գրականության ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին նաև Սովետական Հայաստանի պատմաբանների աշխատությունները։

Եզրափակիչ նիստում ռումին պատմաբան Վ. Կանդյան հանդես եկավ «Ռումին ժողովրդի տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ» զեկուցումով։

Կոնգրեսը պատմական գիտությունների միջազգային կոմիտեի նոր ղեկավարության և նրա նորընտիր պրեզիդենտ Ա. Գեյշտորի (Լեհաստան) առջև խնդիր դրեց աշխատանք կատարել՝ բոլոր երկրների արխիվներն ամբողջ աշխարհի պատմաբանների առջև ավելի լայն բացելու համար։ Հարավսլավիայի պատվիրակությունը հարց դրեց հոգ տանելու պատմական ու կուլտուրայի հուշարձանները պահպանելու մասին։ Առաջարկ մտցվեց բացի ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներից կոնգրեսի պաշտոնական լեզու դարձնել իտալերենն ու արաբերենը։

Կոնգրեսը հատուկ դիմում ընդունեց ամբողջ աշխարհի պատմաբաններին՝ կոչ անելով գիտությունը ծառայեցնել ժողովուրդների բարօրությանը և ակտիվ պայքար ծավալել համայն աշխարհում խաղաղության պաշտպանության համար։

XV МЕЖДУНАРОДНЫЙ КОНГРЕСС ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ

ЦАТУР АГАЯН
Академик АН Арм. ССР

Резюме

По инициативе Постоянного международного комитета исторической науки (МКИН) с 10 по 17 августа 1980 г. в Бухаресте проходил XV международный конгресс исторической науки. На этом очередном конгрессе обсуждались следующие вопросы: «Восточная Европа— зона встречи цивилизаций», «История по хронологическим периодам», «Язык историка», «Взаимоотношения между Западом и Востоком», «Формы проблем мира в истории», «Место и роль преподавания истории преимущественно в средней школе в формировании личности молодого человека XX в.». «Женщина и общество», «Идеи и общества», «Федеративные и плюаристские государства» и др. Выступая по этим вопросам, историки социалистических стран разоблачали буржуазных фальсификаторов и отстаивали марксистско-ленинские позиции в объяснении исторических явлений и процессов.

Конгресс избрал новое руководство: председателем МКИН стал А. Гейштор (Польша). Конгресс обратился со специальным воззванием ко всем историкам мира, призвав их к активной борьбе за защиту мира во всем мире.